

Հոգեւոր Հովիտ  
Ժիրայր Վրդ. Թաշճեանի  
Գրաւոր Զեկոյցը  
Ս. Երբորդութիւն Հայց. Եկեղեցւոյ  
ծխական ժողովին  
Կիրակի, Յունուար 27, 1974  
Թորոնթօ

Սիրելի անդամներ ծխական ժողովի,

իբրեւ զաւակները Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ, սրտագին սիրով կ'ողունենք Զեզ բոլորդ, յանուն Հիւս. Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Մ. Արքեպիսկ. Մանուկեանի:

Կը մաղթենք որ պատկառելի այս ժողովը պատասխանատուութեան խորունկ գիտակցութեամբ եւ աննախապաշար ոգիով յանգի արդիւնաբեր եւ շինարար որոշումներու ուղիղ գործադրութեան, ի փառս Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ եւ ի միջիթարութիւն հայ հաւատացեալ ժողովուրդին:

Տարին որ բոլորեցինք, եղաւ իրապէս վերանորոգման տարի մը, որովհետեւ իբրեւ կազմակերպուած համայնք եւ Եկեղեցի, երախտընկալ սիրով եւ սուրբ համբոյրիւ տօնակատարեցինք մեր Եկեղեցւոյ օծման 20-րդ տարեդարձը, ազգային անկեղծ գոհունակութեամբ ողջունելով զիրար այս լուսաւոր եւ յուսատու հանգրուանին:

Բոլոր անոնք որ անցնող քսան եւ աւելի տարիներու ընթացքին ինչ ինչ ալեկոծուած ծովերէն ու ովկեաններէն ազատուելով ապաստան գտան այս խաղաղ ափերուն, անոնք միայն կրսան երախտագէտ սրտով հաստատել այն ջերմ եւ սիրալիր հայկական օջախը, որուն շուրջ համայնքուած եւ բարի կամեցողութիւն ունեցող հայ մարդոց շնորհիւ ինք- զինքնին գտան այս տոնմիկ հաւաքականութեան մէջ:

Եւ ինչ է արդարեւ ամենէն մեծ միջիթարութիւնը ժողովուրդի մը, եթէ ոչ բազում տառապանքներէ ու տարագրութենէ ետք կրկին զիրար գտնելու, զիրար քաջալերելու եւ զիրար ամբողջացնելու գոհունակութիւնը՝ իր ցեղային միութիւնը խորհրդանշող Հայց. Եկեղեցւոյ փրկարար եւ ստեղծարար հովանիին ներքեւ:

Եւ մենք այդ ամբողջականութեան գիտակցութիւնը ժառանգեր ենք մեր հայրերէն, որք էին ամենեքեան միաբան ի միասին, նոյն հոգիով եւ նոյն ցեղային միութեան գիտակցութեամբ ծառայելու իրարու, ուրախութեամբ եւ միամտութեամբ սրտի, իբրեւ եղբայրական սէր, ընդունող եւ տուող անդամներ հանդիսանալով:

Անցեալ տարի նշանակալից տարի մը եղաւ մեր ամբողջ թեմին համար, Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան կազմութեան 75-ամեակին առթիւ, որուն մէկ ծիւն է նաեւ մեր Եկեղեցական կազմակերպութիւնը: Մենք երախտապարտ սիրով եւ ազգային անկեղծ հաւատարմութեամբ անդրադանք այդ մեծ յիշատակելի տարեթիւն, որ կրկնապէս նուիրագործուեցաւ Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ Կոնդակով:

Որքան ալ այդ մեծ տարեթիւր տխուր էջեր բացաւ մեր առջեք, եւ սակայն մենք ողջմտութիւնը ունեցանք կենդանի դասեր հանելով աւելի հիմնական եզրակացութիւններով մեր թեմական իշխանութիւնը աւելի հաստատ հիմներու վրայ դնելու, եւ թեմը կազմող Եկեղեցիները իրենց ուղիղ եւ արդար առաքելութեամբ աւելի գործօն դարձնելու:

Այսօր Ամերիկայի Հայոց Առաջնորդութիւնը իր կոթողական կառոյցներով իր Առաջնորդարանի կողքին, ազգային արժանապատուութեան ներ ներշնչում եւ նոր վստահութիւն կու տայ մեր բոլորին, Ամերիկայի եւ Գանատայի մէջ:

Սեր սեպուհ պարտքն է զօրացնել Ազգային Առաջնորդարանը, զօրացուցած ըլլալու համար մեր ազգին միասնականութեան ըմբռնումը, փոխադարձ իրարօնութեան եւ պատասխանատուութեան կապերով:

Արդէն մեր անդամներէն շատեր տարիներէ ի վեր կանոնաւորաբար կը ստանան Ազգային Առաջնորդարանի գոյզ պաշտօնաթերթերը իբրեւ կենդանի հաղորդակցութեան կապ մը:

Այդ հաղորդակցութեան իբրեւ արդիւնք մեցի համար մեծ գոհունակութիւն պատճառեց մեր Եկեղեցւոյ անդամներէն Սեղրակ Ատուրեանի, Զաւէն Մեսրոպեանի եւ Վահէ Ունժեանի տարեկան սրտաբուխ նուիրատուութիւնը, որոնք մեր Եկեղեցւոյ անունով կու գան իրենց նոր մէկ վկայութիւնը տալու իրենց անկեղծ Եկեղեցասիրութեան, անդամակցելով նաեւ Առաջնորդարանիս Ս. Կարդան Մայր Տաճարին: Առաջնորդ Ս. Հայրը գնահատելով համայնքիս երեք պատուակալ անդամներուն վեհանձն բարի կամեցողութիւնը, իրենց ուշիմութեամբ եւ ջանասիրութեամբ ձեռք ձգած բարիքներէն բաժին հանելու մեր ազգին Ամերիկայի մեծագոյն նիւ նորքի Առաջնորդանիստ Ս. Կարդան Մայր Տաճարին, մեզի դրկած է իրենց Ս. Կարդանի Տնտեսութիւնը խոր հրդանշող զարդակոճակները, որոնք այս հանդիսաւոր առիթով եւ հաճոյքով իրենց պիտի յանձնենք, մաղթելով որ նոյն հոգին տիրապետէ համայնքիս բոլոր անդամներուն մէջ: Մենք մեր անկեղծ երախտագիտութիւնը կը յայտնենք Ս. Կարդանի Թորոնթոյի Տնտեսսերուն, մաղթելով որ երկար եւ քաջառողջ տարիներ կրեն այդ զարդակոճակները ի փառս Հայց Ս. Եկեղեցւոյ

Եկեղեցական ժամապաշտութիւններն ու կրօնական պարտականութիւնները կատարուեցան կարելիութեանց եւ պատամութեան սահմաններուն մէջ: Եկեղեցին, աղօթքի Տունը, հոգեւոր պարում ունենալու վայր մըն է: Մենք մասնաւոր կարիքը պէտք չէ զգանք ստեղծելու արուեստական միջոցներ եւ մասնաւոր առիթներ, Եկեղեցին քչիկ մը տաքցնելու եւ լեցնելու համար հաւատացեալ-ներով, եւ հանդիսաւոր օրերէն դուրս Եկեղեցւոյ պարապութիւնը աւաղելու, կամ Եկեղեցի զանք լոկ Ս. Պատարագի մէկ մասին եւ կամ վերջին մասին ներկայ զանուելու: Մենք սրտանց շնորհակալ ենք Աստուծոյ գոհութիւններուն համար բոլոր անոնց, որոնք իրենց պարտականութեան զլուխը գտնուելով հաւատքի հերոսներ հանդիսացած են մեր համայնքի կեանքին մէջ, երկար տարիներէ ի վեր ապահովելով խաղաղ եւ ներդաշնակ երգեցողութիւն մը, ներկայ հաւատացեալներուն պարզեւելով հոգիի, մտքի եւ նաեւ ջիղերու անդորրութիւն մը: Մենք կը հաւատանք որ Հասարակաց Աղօթքը, մեծագոյն ոյժն է ընկերութեան, միասին աղօթողները միասին կը մնան ոչ միայն երջանկութեան եւ խաղաղութեան պահերուն, այլ նաեւ փորձութեան, նեղութեան եւ տառապանքի շրջաններուն: Զօրացնենք մեր մէջ միասին աղօթելու զգացումը, որպէսզի կարենանք ունենալ ոյժը հաւաքար դիմանալու այլասերիչ ազդակներուն:

Ունեցանք պարբերական այցելութիւնները հոգեւոր հայրերու եւ եղբայրներու ի միիթարութիւն ժողովուրդին.-

-Արժ. Տ. Աւելոն Քհ. Առաքելեան, Մայիս 18, Մայրերու Օրուան առթիւ:

-Հոգշ. Տ. Յուսիկ ծ. Վրդ. Պաղտասեան, Մայիս 17:

-Հոգշ. Տ. Զաւէն ծ. Վրդ. Արզումաննեան, Գանատայի Առաջն. փոխանորդ

1. - Տունիս 10, Հայ Պարոցի Ամավերջի Հանդէսին առթիւ,

2. - Հոկտ. 14, մեր տարեկան արձակուրդին առթիւ:

-Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. Քէշիշեան, դարձեալ մեր տարեկան արձակուրդին առթիւ:

-Առաջնորդ Ս. Հայրը, Եկեղեցւոյս օծման 20-րդ տարեդարձին առթիւ Դեկտեմբեր 9:

Եկեղեցապատկան մարմիններու եւ կազմակերպութեանց նշանակալից գործունէութիւնները մեզի վստահութիւն կը ներշնչեն աւելի լաւատես ըլլալու: Եւ սակայն տակաւին հրամայական պահանջը ունինք համակարգելու մեր գործունէութիւնները, ներդաշնակօրէն յառաջ տանելու համար մեր ազգային եկեղեցական առաքելութիւնը:

Մեզի համար մեծ միջիթարութիւն եղաւ երկու տարի առաջ հայ Դպրոցիս խումբ մը երկսեռ աշակերտներէ կազմուած կրտսեր դպրաց դասի մը կազմութիւնը, որ շնորհիւ իր երկու տարիներու փորձառութեան եւ կանոնաւոր փորձերուն, արդէն կարեւոր նուաճում մը արձանագրեց, հայ պատանին հայ եկեղեցւոյ սրբազն երգեցողութեան պատրաստելու տեսակէտէն: Այս առթիւ կը գնահատենք այն շերմեռանդ ծնողները, որոնք հայ ծնողքի վայել նախանձախնդրութեամբ, տիպար օրինակ հանդիսացան իրենց զաւակները առաջնորդելով եկեղեցւոյ հոգեւոր կեանքին, այսպիսով առողջ հունտերը ցանելով անոնց հոգիներուն մէջ եկեղեցասիրութեան եւ ծառայասիրութեան, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի գոհունակութիւն բոլորիս:

Ապահովելու համար հիմնական կազմակերպումը Նիրակնօրեայ Դպրոցիս եւ աւելի առողջ հիմներու վրայ դնելու համար հայ նորահաս սերունդին կրօնա-քարոյական դաստիարակութիւնը, մեր նախկին ուսուցիչներու նրուանդ Զուլնեանի եւ Տիգրան Ղազարեանի հետ պաշտօնի կոչեցինք նոր ձեռնհաս ուսուցիչներ, նորայր Տէր Վարդանեան, Մուրատ Պահուտեան, Օր. Նուարդ Թումայեան եւ Օր. Օրօֆրա Գազաննեան, որոնք պատասխանատուութեան խոր գիտակցութեամբ նոր աւիշ եւ նոր կենսունակութիւն խոստացած են տալ: Եւ սակայն տակաւին սրտազին գործակցութեան կարիքը ունինք մեր սիրելի ծնողներուն, վասնզի մենք կը հաւատանք որ անոնց այսօրուան թանկազին զոհութիւններն են որ պիտի ապահովեն վաղուան առողջ եւ օրինակելի սերունդը մեր հոգեւոր ազգային կեանքին համար:

Գոհունակութեամբ կը հաղորդենք թէ Նիրակնօրեայ Դպրոցի ուղղութեամբ Ամերիկայի Հայոց Առաջնորդութեանց Ս. Ներսէս Շնորհալի Աստուածաբանական ուսանողները շնորհալի ծեռնհասութեամբ լծուած են արդիական դասագիրքերու պատրաստութեան, ուսուցիչներու եւ աշակերտներու գործածութեան համար: Վատահենք որ անոնց տարուէ տարի խնամեալ օգտագործումը մեծապէս պիտի բարելաւէ մեր այժմու դրութիւնը:

Այսօրուան մեր ներկային մեր խոր հաւատքով քաջ համոզուած ենք որ նիրակնօրեայ Դպրոցն է այն ամուլը կոուանը որուն վրայ միայն կրնանք հաստատ պահել մեր եկեղեցւոյ երիտասարդակիթնաշարժումը նոր իմաստ եւ նոր բովանդակութիւն տալով հայ երկսեռ երիտասարդութեան գործունէութեանց:

Պատուարժան ծխական խորհուրդիս գնահատելի նախածեռնութեամբ եւ ծնողներու բարի գործակցութեամբ, կազմուեցաւ եկեղեցւոյս պատանիներէ եւ պարմանու հիներէ կազմուած նորակազմ պարախումբը, որ իր կանոնաւոր փորձերով եւ խտապահանջ կարգապահութեամբ, ուրիշ մէկ լուսաւոր իրագործումը հանդիսացաւ մեր եկեղեցւոյ ազգային-մշակութային կեանքի յառաջդիմութեան, արժանի մեր բոլորիս անվերապահ սիրոյն եւ ջերմ քաջալերութեան

Իբրեւ հայ հոգեւորական, երջանիկ պատեհութիւնը ունեցանք երկրորդ անգամ ըլլալով այցելելու եւ մեր երկտարուան միամսնայ արձակուրդը անցնելու Ս. Էջմիածնի Մայրավանքին մէջ, Առաջնորդ Ս. Հօր արտօնութեամբ եւ Պատծխական խորհուրդիս կարգադրութեամբ Սեպտ. 24-Հոկտ. 26, 1973 :

Այսօր Ս. Էջմիածինը, Հայ հաւատքի եւ ազգային եկեղեցական կեանքի դարաւոր կեղրոնք, շնորհիւ Ամենայն Հայոց Հայրապետ Ս. Ս. Օ. Տ. Տ. Վազգակէն Ա. Կաթողիկոսի շանքերուն, հոգածութեան եւ սիրոյն, իր լուսաւոր ներկան կ'ապրի շարունակելով հաւատքի քաջութիւն, ոյժ եւ ջերմութիւն առաքել ի սփիւս աշխարհի ցրուած իր զաւակներուն:

հնծի համար մեծ առանձնաշնորհում մըն էը հայրական անկեղծ հոգածութիւնը ընդունելու ազգիս առաքելաշաւիդ եւ առաքինացեալ մեծանուն հայրապետին, որ իմ մէջ ներշնչեց իր անկեղծ եւ իրաւ հայ հոգեւորականի պայծառ կերպարը, որուն այնքան մեծ կարիքը ունինք սիկիւոքի ափերուն։ Խոկ մեր մեծագոյն առանձնաշնորհումը եղաւ իր սուրբ ծեռքերէն ընդունելու ԽԱԶՔԱՐ մը պազալդ քարէ քանդակուած իբրեւ Հայրապետական նուէր նկեղեցւոյս ՀՕ-րդ տարեղարձին առթիւ։ Թող այս թանկագին նուէրը կենդանի խորհրդանշանը ըլլայ մեր մշտնջենական անկեղծ վերաբերմունքին հանդէպ մեր Մայր նկեղեցիին, Ս. Էջմիածնին եւ անոր աստուածարեալ Գահակալին։

Վերջացնելէ առաջ մեր այս գրաւոր գեկոյցը, պարտք կը զգանք մեր մասնաւոր շնորհակալութիւնը յայտնել Պատ. ծխական խորհուրդին, եկեղեցւոյս անդամներէն թագւոր Պոտուրեանին, Արտաշէս Սարեանին եւ տակաւին բոլոր անոնց, որոնք իրենց աշխատանքով, քարի կամեցողութեամբ, սրտաբուխ նուէրներով ինչպէս նաեւ լրացուցիչ գումարը յատկացնելով օժանդակեցին հայր սուրբի սեպհական ինքնաշարժի գնման ֆօնտին։

Թող Աստուած վարձահատոյց ըլլայ բոլորին, առողջութեան, երջանկութեան եւ բարի գործերուն յաջողութեան լաւագոյն մաղթանքներով։

Բարեխօսութեամբ Վերին քո զօրացդ, միշտ անշարժ պահեա զաթոռ Հայ կազնեայս։

Յաջողութիւն այս ժողովին եւ Աստուածային օրհնութիւն Զեզ բոլորիդ։

---